ԲՈՒԿՈՎԻՆԱՅԻ ՀԱՅԵՐԸ

ՏԱՆ, ԴԵՄԵՏՐԻՍ.—«Արևելեան Հայք ի Պուքովինայ։ Թարգմ. Հ. Գրիգորիս Վ. Գալեմքեարեան, Մխիթ. Ուխտէն. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1891 թ. փոքրադիր 79 երես, գինն է 85 սանտիմ։

Հայ գաղթականութեան պատմութիւնը մինչև այժմ լիակատար չէ ուսումնասիրուած, մինչդեռ նա շատ արժանի է մեր մեծ ուշադրութեան այն պատճառով, որ առաջինը՝ գաղթականութիւնը մեր մէջ այնպէս ծաւալ է ստացել, որ սակաւ աղգերին է եղել վիճակուած, երկրորդ՝ որովհետև ինքը գաղթականութիւնը հետաքրքրական մի էջ է կուլտուրական պատմութեան համար։

Դժբաղտաբար՝ մինչև այժմ եղած գրուածքները, քիչ նիւթ են մատակարարում գաղթականութեան ամբողջ պատկերը ներկայացնելու համար։ Գաղթականների բռնած կէտերը, նոցա տեղից տեղ փոխուելը, նոցա կառուցած եկեղեցիները, նոցա ստացած մի քանի քաղաքական արտօնութիւնները արձանագրուած են ապագային աւանդելու համար։ Բայց գաղթականների ներքին կեանքը, նոցա դիրքը բնիկների շրջանում, նոցա մուծած կուլտուրական բարեփոխումները նոր երկրի մէջ, նոցա յարաբերութիւնները միմեանց մէջ և ուրիշների հետ չեն, եղած լուրջ հետազօտութեան առարկայ։

Պ. Դ. Տանի յօդուածը, թէև կատարեալ չէ մեր պահանջի նկատմամբ, սակայն բաւականաչափ ծանոթացնում է մեզ Բուկովինայի հայ գաղթականութեան հետ, տալիս է հայերի այդ մնացորդների պատմական կեանքի և ներկայ կենցաղավարութեան մասին հետաքրքրական տեղեկութիւններ։

Հայերի գաղթականութիւնը դէպ հիւսիս սկսել է շատ վաղուց։ Դ. Տանը, հիմնուելով պատմական վկայութիւնների վերայ, հաղորդում է, որ հայերի մի մեծ թիւ եղել է Ռուսիայում սորանից աւելի քան ութ հարիւր տարի առաջ։ Ռուսաց Իզեասլաւ իշխանի հրուէրով՝ 1062 թուականին՝ Անի քաղաքից 20,000 հայ եկել են Ռուսիա՝ պոլովցիների (այժմեան ռումանացիների) դէմ կռուելու և այլ ևս չեն վերադարձել Հայաստան, այլ հաստատուել են նախ Կիեւում, յետոյ Կամենեց-Պոդոլսկում, որտեղից սփռուել են բոլոր շրջակայ երկիրները։

Տասներեք երրորդ դարուց դէսը՝ հայերի մասին տեղեկութիւնները սկսում են յաճախ երևալ օրագրութիւնների և յիշատակարանների մէջ։ Այդ տեղեկութիւնները կազմում են պ. Տանի յօդուածի մի մեծ մասը։

Մենք կանգ առնենք այն նկարագրութեան վերայ, որ տալիս է Դ. Տանը լուսաւորչական հայերի և նոցա արդի կեանքի մասին Բուկովինայում. Նա ասում է. «Հայք

ունին մեծանիստ կերպարանք, սաստիկ սև, մեծ ու կրակոտ աչք, սև մազ, աւելի գունատ՝ քան թուխ գոյն. սակայն կը գտնուին, թէև սակաւ, գեղնահեր հայեր. ունին միջին կազմածք և զօրաւոր և լաւ աճած մարմին։ Չեչաղէմ շատ սակաւ է հայոց քով։ Կը կարծուի որ ծաղկի պատուաստը հայոց ձեռօք Եւրոպա անցած է։

Հայք ունին բոլորովին համեստ կեանք, բնակութիւն, հանդերձ և կերակուր. մեծապէս ժուժկալ են—վասն զի արբեալ հայ մը տեսնել շատ սակաւ բան է—չափաւոր և ողջախոհ, շատ հիւրասէր, առևտրի մասնաւոր ձիրք ունին, շատ զւարճախօս են և ճարտասան։

Ցորեկն, մանաւանդ ճամբորդութեան ժամանակ՝ քիչ կ'ուտեն, իրիկուան՝ արևելեան սովորութեան համեմատ՝ բազմախորտիկ ընթրիք մը կ'ընեն։

Հայք Եւրոպա գաղթելէն ետև՝ բաց ի խաղախորդութենէ և մորթ կարմրելու արուեստէն, կը զբաղին միայն արևելքի այլ և այլ ապրանքներու շահաբեր վաճառականութեան, որ են՝ գորգ, սաֆիանի և քորտովանի մորթ, համեմանք, մուշկ, խավիար, թառափ, գինի, ձի, գէնք և այլն։ Նաև շատ անգամ իբրև թարգման արևելեան լեզուաց կը գործածուին։ Լեհաստանի, Հունգարիոյ և Մոլտաւիոյ վաճառաց միջնավաճառութիւն կ'ընեն։ Հունգարիայէն կը բերեն սպիտակ և կարմիր փոկեղէն, ձիու ծածկ և նկարէն կաշեայ արկղներ. այս առևտրով Սուչավայի հայք մինչև ցայսօր կը զբաղին, թէև ոչ մեծ ձեռնարկութեամբք։

Ապրանքներն՝ արևելեան ոճով կարաւաններով կը փոխադրուին, առաջնորդուելով կարաւանապետէ մը։

Հայք կը զբաղին նաև մսավաճառութեամբ, եզան և ոչխարի միս չոր, կարծր և մխեալ երշիկներ կը շինեն, զորոնք իրենց ձևին համեմատ «սալամի, սուճուգ. փողքովէ» կ'անուանեն. Նաև ոչխարի և եզան միս կ'ապխտեն, զոր «պուժէնիցա» կամ «փաստրմա» կը կոչեն։ Այս տեսակ չոր մսեղէններ պատրաստելու ստիպուած էին իրենց լաճախակի հալածման ժամանակ. պաղթականութեան ճամբուն վրայ մսիղէն ուտել կարենալու համար՝ ստիպուած էին միսը չորցնել. աղել և մխել՝ որ չապականի։ Գիտեն նաև «սալխէ» (սպանդանոց) մորթուած անասնոց ճարպէն ճրագ և օճառ շինել, որ գործոյն կ'օգնեն նաև կանայք։

Վերջին ժամանակները կը զբաղին միայն գիւղատնտեսութեան, արջառաբուծութեան և ի Վիեննա եզ փոխադրելու, արջառի տեսակներ մորթելու, պանիր շինելու և բամբակի առևտրոյ. սակայն հետզհետէ վաճառականութեան ամեն ճիւղերը կը կորսնցնեն, վասն զի իրենց արուեստակից և աւելի բազմաթիւ ու հարուստ հրեայք զիրենք կը դերազանցեն, որուն քիչ նպաստ չ'ըներ նաև կրթութեան հետ ստացուած քնքոյշ կեանքը, մեծամեծ շռայլութիւնք և վաճառականութեան հետ կապուած նիւթական վնասակցութենէ սոսկալն։ Եւ սակայն մինչև ցայսօր Պուքովինայի առանձնական մեծ կալուածատերց երրորդ մասը կը կազմեն հայերն։

Սուչավայի հայք ունին սեպհ-
կան ազգային խոչնոց մը՝ «Անի» ան-
ուամբ, որ կը գտնուի Ժողովրդական-
կան եկեղեցւոյ շուրջը նոյն եկեղեց-
ւոյն վերաբերեալ վարձու տան մէջ,
ուր հայերէն, գերմաներէն, ռումանե-
րէն և զաղղիերէն լրագիրներ կան.
ունին նաև սեպհական սրճանոց մը։
Շատ տակաւ կը տեսնուի՝ որ հայ մը
ուրիշ սրճանոց մ'երթայ։

Հայոց խոհանոցը թէ նորագոյն և
թէ արևելեան ազգային կերակուր-
ներ կը մատակարարէ։ Հայուն տուն
այցելող օտարականը կը գտնէ հոն
ընդունելութիւն մը՝ արևելեան սո-
ւորական քաղցրաւենեաք։

Սուչավայի հայոց զգեստը մինչև
վերջին տարիներս առհասարակ ա-
րևելեան էր, երկու սեռինն ալ հա-
ւասարապէս։ Այրը կը հագնէր չապիկ
և «ռայդուժ» կամ «չալ չար» կոչուած
սրնոց մը վրան լաճախ մետաքսեայ
ծաղկենկար վերարկու մը, ռումա-
ներէն «անթէրէօ» (տե. ԷՆԹՈՒ) կոչ-
ուած, որուն աջէն ձախ զոցուզ կո-
ղերը թանկագին ծաղկենկար տաճ-
կական վարշամակ (շալ) մը մէջքը
պատատուելով զոց կը պահէ։ Կուրծ-
քին վրայ այս վերարկուին ծալքերուն
մէջ գունաւոր՝ լաճախ մետաքսեայ
թաշկինակ մը կ'ըլլայ։

Արանց ոտնամանն է դեղին սա-
ֆիանէ հողաթափ, և տաճկական
վարշամակ մը՝ «չուխա» կոչուած,
կը պատատուէր. իսկ նոր ժամանակ-
ներ կը դնեն խորունկ՝ վերին մասը
մետաքսապատ կղբենուոյ խոյր. իսկ
աղքատներն՝ դառնենուոյ բարձր խոյր։

Կանանց զգեստն էր առանց թե-
ղանեաց երինագոյն՝ նաև մետաք-
սեայ պճղնաւոր հանդերձ մը, որ վե-
րէն ի վայր կը ծածկէր, որուն վրայ
կուգայ ըստ աստիճանի և հարստու-
թեան իւրաքանչիւրոյ՝ թաւշեայ,
մետաքսեայ և կամ լոկ կտաւէ «քա-
ցավէչքա», որուն աստառը թանկա-
գին մուշտակէ, ազուիտու և կամ
գառի մորթէ կ'ըլլար, զոր և ցալսոր
հայ կանայք հանուութեամբ կը հագնին։

Այս օրերս հայոցմէ չատերը նո-
րագոյն եւրոպական ձևով կը հագնին.
սակայն կը գտնուին նաև այնպիսիք,
մանաւանդ ի Սուչավա, որ բազմա-
ծալ՝ երկայն արևելեան հագուստը
կը պահեն։

Յիշեցէք նաև, որ մինչև Պուքո-
վինայի միացեալ հայք լեհերէն
կը խօսին և լեհաց բարեկամ են, ա-
րևելեան հայք ռումաններու բարե-
կամ են, և իրենց մայրենի լեզուին
հետ՝ ուելի սիրով, մինչև իսկ ընտ-
անեկան անձուկ շրջանին մէջ ռու-
մաներէն կը խօսին, զոր չատ կա-
տարեալ դիտեն։

Հայկական եկեղեցիք ճարտարա-
պետութեան կողմանէ ճիշդ օրթո-
դոքս եկեղեցեաց պէս չինուած են,
և երգեհոն չունին. խորանն արևելք
ուղղած է։ Եկեղեցեաց յատակը տախ-
տակամած է և գորգով կամ նմանեաք
ծածկուած. վասն զի հաւատացեալք
քանի մ'աղօթից ժամանակ մուճա-
կով պէտք է որ մնան։

Պատարագիչ քահանայն իւր պա-
տարագչութեան ամբողջ չաբաթը ե-
կեղեցւոյ գաւթին մէջ, և կամ եթէ
այս չը կայ, եկեղեցւոյ քով սենեկի
մը մէջ պիտի ննջէ։

Արևելեան հայք մեռոնը Էջմիած-
նի կաթողիկոսէն կ'ընդունին։

Պուքովինայի և Կալիցիոյ բովանդակ արևելեան հայ ժողովրդապետութեան կը վերաբերին։

Սուչավայի արևելեան հայ ժողովրդապետութեան կը վերաբերի նաև . Կուրա-Հոմորուլուի գոնուղ 10—15 տնէ բաղկացեալ հայ գաղթականութիւնը, որ և այնտեղ հաստատուն նիւթ է շինած դեղեցիկ եկեղեցի մ'ունի Ս. Գէորգ անուամբ, որուն դրամը գումարուած է հայոց մէջ, և 1867 ին շինուած և օրհնուած է։

Հայք ունին 12 անդամէ բաղկացեալ եկեղեցական հոգաբարձութիւն մը, որ արդէն կ'ընտրուի 3 տարուց համար, որոնցմէ 5 անդամ գլխաւոր լանձնաժողովը կը կազմեն, իսկ միւս 7 անդամն երկրորդական լանձնաժողովը, որոնց կանոնագրութիւնը 1872 էն ի վեր բարձրագոյն իշխանութենէ հաստատուած է։

Եկեղեցական Հոգաբարձութեան գործն է, ընչից մատակարարութեան մէջ կարգաւորութիւն պահել և ամէն տեղ եկեղեցւոյ շահուն պաշտպան ըլլալ, հոկել ուսուցչաց վրայ՝ որոնք նաև եկեղեցւոյ երդեցիկքն են. ունի իրաւունք քահանայն պաշտօնէն կախելու, քահանայագու առաջարկելու ժողովրդեան՝ ընտրութիւն, և ընտրեալը առաջարկելու եպիսկոպոսին ի ձեռնադրութիւն։ Հոգաբարձութիւնը պարտական է եռամեայ պաշտօնավարութենէն ետև աղգային ժողովին համար տալ։

Սուչավայի մէջ արևելեան հայք 4 դասարանով ճխական դպրոց մ'ունին, Ս. Գր. Լուսաւորչի անուամբ, որ 1824-էն ի վեր ժողովրդապետական եկեղեցւոյ դաւթին մէջ գեղեցիկ շինութիւն մըն է, և հետևեալ արձանագրութիւնը կը կրէ. «Այս դպրոցս հանդերձ ամենայն կալմածով շինուեցաւ ի փառս Աստուծոյ հայ աղգին օգնութեամբ, ի հաւատս Լուսաւորչին, լոգուս հայ մանկաւոյ քաղաքին Սուչավայ. Յամի Փրկչին 1824 թ., ի թվ. հայոց ՌՄՀԴ։

Այս դպրոցի մէջ՝ բացի ծխական դպրոցներու առարկաներէն՝ որ հայերէն կ'աւանդուին, նաև լատուկ ուսուցիչ մը գերմաներէն և ռումաներէն լեզուց դաս կուտայ, և նաև հայկական եկեղեցական երգեցողութիւն կ'ուսուցանի։

Պուքովինայի դրաման ժամանակ, որովհետև Սուչավայի արևելեան հայք սեպհական եպիսկոպոս չունէին և ոչ ալ աւստրիական կայսրութեան մէկ երկրին մէջ կար, Յովսէփ Բ կայսրն Աստրախանի Յովսէփ Արղութեանց արքեպիսկոպոսին խնդրանաց համեմատ՝ 1786 թ. մարտ 15 ին հրաման տուաց, որ Պուքովինայի հայք իրենց քահանայքը հայրենիքէն բերել տան, կ. Պոլսոյ հայոց պատրիարքին իրաւասութեան տակ ըլլան, և ասոր հետ հպատակին Էջմիածնի կաթողիկոսին՝ որ ի հայս ռուսաց։

Ի վերջոյ կ'ուզենք հռոմէական եկեղեցւոյ հետ միացեալ Պուքովինայի հայոց ալ քանի մը խօսք ըսել։

Միացեալ հայք Կալիցիայէն եկան Պուքովինա արդէն աղդայնութիւնն կորուսած և բոլորովին լեհացած, ըստ մասին Զեռնովից և ըստ մասին Սէբէթ հաստատուեցան, ռումանացի Պոյարներու կալուածները վարձեցին—որոնք աւելի սիրով Մոլտաւիա կը բնակէին—ինչպէս նաև արևելեան

յունական եկեղեցւոյ կալուածներն, և խնայութեամբ ու աշալրջութեամբ ագարակներ մշակելով՝ ժամանակաւ նոյն տեղերու կալուածատէրն եղան։

Այսօր Գուքովինա բնակող կաթողիկեայ կալուածատէր հայերն ունին ի Չեռնովից Շլանկէնկասսէ փողոցի վրայ գեղեցիկ և որմապատ եկեղեցի մը, որ 1870—1875-ին շինուած է դրամաժողովով, և նուիրուած է Պետրոս և Պաւղոս առաքելոց։ Իրանց հովիւն է ծերունի կանոնիկոսն Ֆլորիան Միդուլաքի, որուն մի մի օգնական արուած է ի Չեռնովից և ի Սուչավա։

Այս միացեալ հայք այսօրս իբրև լեհ կ'ապրին, և միայն հայ եկեղեցին և հայերէն պատարագը կը յիշեցնեն իրենց նախնաբար հայ ազգէ ըլլալը։

Վերջին ժամանակներս Հռոմ համոզեց Լէմպէրկի հայ կաթողիկեայ արքեպիսկոպոսն, որ վերջնականապէս և ամբողջապէս միանայ նաև կարտորոգականս լատին եկեղեցւոյ հետ և լատիներէն պատարագ մատուցանեն, որ և պիտի ըլլար, եթէ այս վերջին րոպէին այս լեհախօս հայոց մէջ ազգայնութեան կայծը չը բորբոքէր, և իրենց առաջնորդին ուղղած թղթով չը պահանջէին՝ որ իրենց թող տրուի հայ ազգայնութեան վերջին յիշատակն՝ հայերէն պատարագն, ապա թէ ոչ՝ արևելեան հայ եկեղեցւոյ կ'անցնին։

Մենք մեզ թոյլ տուինք այսքան մեծ քաղուածքներ անելու, որպէս զի ներկայացնենք ընթերցողին գաղթականութեան մնացորդներից մէկի այսօրուայ պատկերը։

Ցաւալի է, որ պ. Տանը չէ հաղորդում իւր գրքում վիճակագրական տեղեկութիւններ հայերի մանրամասն թուահամարի, նոցա բազմանալու և երկրի զանազան խորշերում տարածուած լինելու մասին։

Գրքոյկը ընդունելութիւն կը գտնի աւստրիական հայերի շրջանում և նորանոր հետախուզութիւնների առիթ կը դառնայ։ «Հանդէս Ամսօրեայ» վերջին համարը (հոկտեմբերի) արդէն բերել է մի յօդուած՝ գաղթական հայերի տոմարի փոփոխութեան մասին։

Կրօնական խնդիրներին վերաբերեալ՝ կան սխալ հասկացուած տողեր, որոնք ներս են մտել հեղինակի անգիտութիւնից և ոչ չար դիտաւորութիւնից։

Հեղինակը ծանօթութիւնների մէջ մատնացոյց է լինում այն աղբիւրների վերայ, որոնցից օգուտ է քաղել իւր յօդուածը կազմելու համար։

Ն.